<<Քայլ առ քայլ>>
բարեգործական հիմնադրամ

<< Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Անձերի ինքնուրույնության, նպատակադրողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում

Դասախոսակ՝ Անահիտ Տոնոյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Լոռու մարզի << Վ. ավերդի համայնքի>> Օձունի մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ

2023թ

Բովանդակություն

1. Ներածություն.....1

2. Ինքնուրույնություն.....3

4. Գլուխ 1. Ստեղծագործական ունակություններ..... 5

5. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում..... 7

6. Գլուխ 2 Պարապմունքի պլան.....9

7. Դիտարկում.....12

8. Եզրակացություն.....13

9 . Օգտագործված գրականություն 14

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ինքնուրույնությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է , ինչի ձևավորումը սկսվում է բավականին վաղ տարիքում :

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է սաների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Երեխաները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և ուսուցիչներից, ովքեր շրջապատում են երեխային: Ինքնուրույնությունը վաղ մանկության տարիքում բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, սաների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը: Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից: Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է դաստիարակի դերը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, պարապմունքից պարապմունք: Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել սաների ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

➢ Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժկան միջոցները

➢ Պարզել, թե ինչպես են ազդում ստեղծագործական խաղերը սաների

ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման վրա:

➢ Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են սաների ինքնուրույնության խթանման գործում:

➢ Առաջարկել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ: Այսպիսով, հավելենք, որ մանկավարժությունը՝ սաների ինքնուրույնության խթանման առաջնային նպատակն է սանի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլ

Ի Ն Ք Ն ՈՒ Ր ՈՒ Յ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Վաղ մանկության տարիքը, մանկավարժների և հոգեբանների կարծիքով, առավել կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորել հետագա կյանքում, կենսագործունեության տրբեր ոլորտներում: Այդպիսի որակներից են ստեղխագործական ակտիվությունը, ինքնուրույնությունը, վստահությունը, պատասխանատվության զգացումը, համառությունը և այլն: Այս տարիքում երեխայի կայացման կարևոր ուղղություններից է ինքնուրույնության զարգացումը, որը մեծապես որոշում է երեխայի հաջող գործունեությունը հետագա կյանքում: Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար՝ երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով՝ զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ: Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին: Վաղ մանկական տարիքում աշակերտը սովորաբար ունի դրական տրամադրվածություն շրջապատող իրականության հանդեպ, սիրում է խաղալ և երևակայել: Այս տարիքում երեխան, որպես կանոն, արդեն հակված է սեփական կարծիքը ունենալու, սակայն մեծի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և բզարգացման վրա: Այս ամենը անմիջականորեն ազդում է երեխայի և շրջակա իրականույան միջև փոխազդեցությունների վրա: Գիտակցելով, որ ինքնուրույնությունը անձի կարևորագույն բաղդրիչներից մեկն է, բազմաթիվ ժամանակակից գիտնականներ ուշադրություն են կենտրոնացրել դրա էության ուսումնասիրության վրա: Իսկապես, ինքնուրույնության դաստիարակման խնդիրը ենթադրում է այդ ֆենոմենի հստակ սահմանում և դրա հատկանիշների առանձնացում: Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի,<< ինքնուրույն>>հասկացությունը ունի մի քանի սահմանումներ

- ✓ Անկախ, ազատ

- ✓ Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն
- ✓ Մյուսներից առանձնացված
- ✓ Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն՝ առանց կողմնակի օգնության և ուղղորդման

Կողմնակի ազդեցությունից անկախ Զ. Շինտարը ինքնուրույնության ֆենոմենը սահմանում է , որպես <<անկախություն>>, անձի ձգտում և ունակություն, գործողություններ կատարել առանց շրջապատող անձանց օգնությա¦ : Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող – օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ: Սակայն, ինքնուրույն գործելու ունակությունը չի բացառում կողմնակի օգնության հնարավորությունը և, նույնիսկ, ցանկալիությունը: Ինքնուրույնությունը սահմանվում է ոչ միայն որպես ազատություն արտաքին ազդեցություններից և պարտադրանքներից, այլև որպես ընդունակություն հակազդել արտաքին ազդեցություններին և վերամշակել դրանք սեփական գիտակցության մեջ: Ըստ մանկավարժական հանրագիտարանային բառարանի ինքնուրույնությունը սահմանվում է որպես անձի առանցքային որակներից մեկը, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել դրանց իրականացմանը¦: Միևնույն ժամանակ, ինքնուրույնության տակ ենթադրվում է անձի պատասխանատու վերաբերմունքը սեփական արարքների հանդեպ, ընդունակություն ցանկացած իրահճակում գործել գիտակցված և նախաձեռնողական, կայացնել ոչ ավանդական և ոչ ստանդարտ որոշումներ: Ինքնուրույնությունը միասնություն, ստեղծագործական և ակտիվ վերաբերմունք է արտաքին աշխարհի հանդեպ: Առաջատար հոգեբանների և մանկավարժների կարծիքով երեխաների ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը առաջին հերթին արտահայտվում է կարողության և ընդունակության մեջ ինքնուույն մտածել, կողմնորոշվել նոր իրավիճակում, ինքնուրույն տեսնել խնդիրը և դրա լուծման ուղիղները:

Գլուխ 1 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից : Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել: Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Անձի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա: Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել աձի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ: Հայտնի են նաև ստեղծագործականության և ինքնուրույնության որոշ տարիքային առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, Ա. Բելոուսովան կարծում է, որ վաղ մանկական տարիքում ստեղծագործականության խթանման վրա մեծապես ազդում են էմոցիաները: Սակայն ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործական գործընթացը կապվում է տեսական մտածողության հետ: Մանկապարտեզում սաների ստեղծագործականության խթանման գործում կարևոր նախապայման է դաստիարակի ներազդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա: Այսպիսով, ստեղծագործականությունը ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ: Ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում:

Մանկապարտեզի սաներին ինքնուրույնությունը եղել և մնում է ներկայիս մանկավարժության ամենահրատապ խնդիրներից մեկը: Երեխայի կամային հատկանիշները նրա բնավորության հիմնական կողմն են,այդ իսկ պատճառով պետք է լուրջ ուշադրություն դարձնել նրա դաստիարակությանը: Ինքնուրույնությունը երեխայի հետագա գործունեության զարգացման համար անհրաժեշտ կամային կարևոր հատկանիշ է: Սաները մանկապարտեզում դաստիարակության և ուսուցման գործընթացում պետք է սովորեն ինքնուրույն նպատակներ և խնդիրներ դնել, լինեն նախաձեռնող իրենց գործունեության ընթացքում,ոչ միայն կարողանան առաջադրել խնդիրներ և վարկածներ, ենթադրություններ խնդրահարույց իրավիճակների լուծման տարբերակների վերաբերյալ, այլև գտնել դրանք լուծելու համար եղանակներ՝ հաղթահարելով տարաձայնությունները: Այս խնդիրների լուծման ճանապարհին բավականին մեծ է դաստիարակի դերը: Դաստիարակի գործունեությունը պետք ուղղված լինի երեխաների նախաձեռնողականության , ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը անձակենտրոն փոխազդեցության միջոցով: Այն ապահովվում է երեխայի անհատականության զարգացումը ու ինքնազարգացումը ՝ հիմնվելով անհատական հատկանիշների նույնականացման վրա: Դրանք դաստիարակը որոշում է համակարգված դիտարկումների միջոցով: Երեխայի անհատականությունը նա դնում է իր աշխատանքի առանցքում՝ ապահովելով նրա զարգացման հարմարավետ, հակամարտությունից զերծ և անվտանգ պայմանները՝ գիտակցելով իր բնական ներուժը: Դաստիարակի համար առաջնահերթ խնդիր է ներդաշնակ զարգացած անհատականության ձևավորումը: Մանկավարժը քաջ գիտակցում է , որ ինքնուրույնությունը երեխայի առաջատար որակներից մեկն է , որն արտահայտվում է որոշակի նպատակ դնելու, դրա իրականացմանը ինքնուրույն հասնելու ունակությամբ, սեփական գործունեության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելու և ոչ միայն գիտակցաբար, այլև ակտիվորեն գործելու ունակությամբ: Յուրաքանչյուր խմբում ինքնուրույն աշխատանքի անցկացումը ունի որոշակի առանձնահատկություններ: Մանկավարժները հաճախ կիրառում են իրենց սաների ակտիվությունը խթանող հնարներ: Այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են սաներին ինքնուրույն աշխատել , բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ: Ինքնուրույն աշխատանքի և

ինքնուրույնության միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսպիսով՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Բայց նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում: Ազատությունը համարվում է ինքնուրույնության ձևավորման նախապայմանը: Որպեսզի երեխան ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության ընթացքում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս,երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետքրքրություն: Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ինքնուրույն աշխատանքները, որ կատարում է սանը մանկապարտեզում կամ տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա: Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան պատրաստ չէ ինքնուրույնության և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝ մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց մանկապարտեզի խնդիրն էլ հենց օգնելն է երեխային՝ գիտակցելու ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անհերքելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, խնդիրներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Գլուխ 2 Պարապմունքի պլան

Խումբ՝ կրսեր 2-րդ

Պարապմունքի տևողությունը 15-20 ր

Պարապմունքի թեման՝ <<Մարմնի մասեր>>

Նպատակը

- ✓ Սովորեցնել ինքնուրույն հասկանալ , գնահատել և թվարկել մարդկային դրական հատկանիշները
- ✓ Ինքնուրույն թվարկել մարմնի մասերը , դրական տրամադրություն առաջացնող ածականներով
- ✓ Ինքնուրույն բնութագրել ընկերներին
- ✓ Հարստացնել բառապաշարը ՝ բարի, խելացի, գեղեցիկ, ճշտախոս բառերով:

Վերջնարդյունք

- ✓ Ինքնուրույն կարողանում է խաղալ շարժախաղեր
- ✓ Ինքնուրույն ընկալում է բառի նշանակությունը
- ✓ Ինքնուրույն ձևակերպում և արտահայտում է սեփական մտքերը
- ✓ Ինքնուրույն սովորի մարդկային դրական հատկանիշները

Անհրաժեշտ նյութեր

- ✓ Տարա, այլուր, աղ, բուսայուղ, ջուր, ծեփատախտակ, Ա4 թղթեր, գունավոր մատիտներ:

Պարապմունքի ընթացքը

Դաստիարակը երեխաների օգնությամբ վերցնում է տարան , հերթով լցնում են անհրաժեշտ նյութերը, իսկ դաստիարակը խառնելով հետևյալ բաղադրիչները ստանում են աղի խմոր: Հունցելու ընթացքում դաստիարակը երեխաների ցանկությամբ տարբեր դրական հատկանիշներ է ավելացնում << խմորի>> մեջ:

Երեխաները ինքնուրույն <<ծեփում են >> գլուխը, ձեռքերը, ոքերը, իրանը, աչքերը, ականջները, քիթը, բերանը: Երեխաները ինքնուրույն մոտենում են << խմորե տիկնիկին>>, շոյում են գլուխը, դրական ու գեղեցիկ հատկանիշներով նկարագրում նրան:

Սաները փչելով և շշնջալով՝ << Տիկնի՛կ, կենդանացի՛ր>> բառերը, շունչ են

տալիս իրենց ստեղծածին:

Խթանում

Հարցեր երեխաներին՝

- ✓ Երեխանե՛ր, ինչի՞ մասին էր մեր թեման
- ✓ Ինքնուրույն նկարագրել մեր տիկնիկի մարմնի մասերը

Իմաստի ընկալում

Դաստիարակը ներկայացնում է թեման, թե ի՞նչ մասերից է կազմված մարդու իրանը:

- ✓ Դադարներով ընթերցանություն <<Մարմնի մասերի>> մասին
- ✓ Յուրաքանչյուր դադարից հետո դաստիարակը հարց է տալիս և երեխաները պատասխանում են
- ✓ Տեքստը ավարտելուց հետո որպես ընդհանուր ամփոփում, դաստիարակը մի քանի հարց է հղում սաներին:
- ✓ Ինչի՞ մասին է մեր պատմվածքը
- ✓ Թեմայի շուրջ ի՞նչ սովորեցինք
- ✓ Յուրաքանչյուր մարմնի մաս ինչի՞ համար ենք օգտագործում
- ✓ Խաղում են <<կորել է>> դիդակտիկ խաղը
- ✓ Դաստիարակը հայտարարում է , թե կորել է երեխան: Սկսում է նկարագրել խմբի երեխաներից մեկին (մազերը, աչքերը, գույնը, հասակը, հագուստը, սեռը և այլն):
- ✓ Սաները անվանում են <<կորած>> երեխայի անվանումը:

Ֆիզկուլտդադար

Բա՛րև, բա՛րև , իմ ընկեր,

Ուրախ պարենք իմ ձեռքեր,

Դուք էլ դոփեք իմ ոտքեր,

Որ պտտվենք մենք ուրախ,

Այսպես ժպտանք մենք իրար:

Կշռադատման փուլ

Դաստիարակը առաջարկում է սաներին ինքնուրույն մոտենալ ծեփատախտակին, լսեն հարցը: Ճիշտ պատասխանը հնչեցնելով մարմնի համապատասխան մասը փակցնել ծեփատախտակի վրա:

Դիդակտիկ խաղ՝ կատարել նկարչություն<< մարմնի մասեր>>: Երեխաները ինքնուրույն նկարագրում են իրենք իրենց:

Աշխատանքը ամփոփել և ավարտել <<դեմ առ դեմ >> մեթոդով:

Դիտարկում

Դաստիարակը պարապմունքի ընթացքում միևնույն թեմայի շուրջ տարբեր գործողությունների միջոցով իրականացրեց իր առջև դրված նպատակին: Երեխաները աշխատանքները կատարում էին սիրով և մեծ հետաքրքրությամբ:

Պարապմունքը անցավ ճիշտ կառուցվածքով: Երեխաները ակտիվ էին, կարողանում էին ազատ և ինքնուրույն արտահայտել իրենց մտքերը:

Պարապմունքի թեման բխում էր ծրագրային պահանջներից, նպատակները և խնդիրները հստակ ձևակերպված էին: Երեխաների նկատմամբ ցուցաբերվում էր անհատական մոտեցում:

Տնօրեն՝ Մանե Մայիլյան

Դաստիարակը հասավ իր նպատակին: Երեխաները ճանաչեցին իրենց մարմնի կառուցվածքը : Իմացան, որ բոլոր մարդիկ ունեն 5 զգայարան, որոնց օգնությամբ սովորում են ճանաչել առարկաները, նրանց ձևը, գույնը, հոտը, համը, որակը: Իմացան , որ իրենց զգայարանները օգնում են ճանաչել աշխարհը և ապրել իրենց շրջապատող աշխարհում: Պարապմունքի ընթացքում երեխաները ակտիվ էին: Խմորի միջոցով յուրաքանչյուր երեխա ներկայացրեց մեկ մարմնի մաս և կարողացան բացատրել թե որ մարմնի մասը ինչ գործողություն է կատարում:

Դաստիարակի կողմից հետազոտական թեման մեծ կարևորություն է ն/դ կրթության մեջ: Երեխաները ճանաչեցին իրենց մարմնի մասերը : Իմացան, որ բոլոր մարդիկ տարբեր են, բայց միևնույն ժամանակ նման են իրենց մարմնի կառուցվածքով: Նրանցից յուրաքանչյուրը ունի ձեռքեր, ոտքեր, բերան, ականջ, աչք, քիթ:

Մեթոդիստ՝ Գայանե Մանթաշյան

Եզրակացություն

Այսպիսով ինքնուրոունությունը, նախաձեռնողականությունն և ստեղծագործական ունակությունները հատկանիշներ են, որոնք պետք է անընդհատ զարգացնել մանկապարտեզի սաների մոտ: Սաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ ցածր խմբից մինչև ավագ խումբ: Դաստիարակի համար առաջնահերթ խնդիր է ներդաշնակ զարգացած անհատականության ձևավորումը: Մանկավարժը քաջ գիտակցում է, որ ինքնուրույնությունը երեխայի առաջատար որակներից մեկն է, որն արտահայտվում է որոշակի նպատակ դնելու, դրա իրականացմանը ինքնուրույն հասնելու ունակությամբ, սեփական գործունեության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ցուցաբերելու և ոչ միայն գիտակցաբար, այլև ակտիվորեն գործելու ունակությամբ: Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությանը՝ Ինքնուրույնություն սերմանելով նպաստում ենք նրանց ստեղծագործական ունակությունների և տրամաբանական կարողությունների զարգացմանը: Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Ստեղծագործականությունը երեխայի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության, մտածողության առանձնահատկությունների հետ: Ստեղծագործականությունը զարգացնում է գեղագիտական ճաշակ, քննադատական, համեմետական, ճանաչողական կարողություններ,պատասխանատվության զգացում: Նախաձեռնողականությունը այն շարժիչ ուժն է, որը ամեն մի նոր միտք առաջ է մղում դեպի իրականություն: Նախաձեռնողականությունը կարողություն է իմանալու ինչպես հաղթահարել էմոցիաները, խոչընդոտները,և դրա հետևանքով առաջացած խնդիրները ցանկացած իրավիճակում:Մանկապարտեզի յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում կարևոր է դաստիարակի տրամադրվածությունը նախաձեռնողականությամբ օժտված սաների հանդեպ: Այս բացահայտումների հիման վրա կարելի է նաև եզրակացնել , որ եթե երեխան օժտված է ինքնուրույնությամբ և ստեղծագործականությամբ, կարելի է ասել որ արդեն նաև նախաձեռնող է :

Գրականության ցանկ

1. Բ. Ֆ Ռայսկի «Մանկավարժության ներածություն» - 1977թ.

2. Թ.Ա Կովալյով «Մանկավարժության ներածություն» - 1977թ.

3. Ն. Ա Սորոկին «Մանկավարժության ներածություն» - 1977թ.

4. Պ. Բ Էլկոնին «Մանկավարժական հոգեբանություն» - 1960թ.

5. Ա. Գ Կովալյով «Անձի հոգեբանություն» - 1970թ.

6. Ի.Վ. Օխուլկովա «Ինքնուրույնության ձևավորումը նախադպրոցական տարիքի երեխաների մեջ»- – 2013թ

7.Նախաշավիղ 8.2013թ, 3,2014թ